



ՀԱՅԵՐՆ ԱԿԱԴԵՄԻ

Անդրանիկ Էջմի

ՀԱՅՈՒ ՍԵՎԻ

Մահմադ Էջեր

ԵՊԵՇԱՆՏԻ «ԿԱԼԵՎ»

1995

Գ.ՄՊ. 8427-5

Ա 411

Հեղինակային ինքնազրերը վերծանեց,
կազմեց, առաջարանը գրեց և ծանոթագրեց
Ա.Ե.ՔՍԱՆԴՐ ԹՈՓԶՅԱՆԸ

Արդեամբ հոգեշնորհ Հ. Պարետ Մ. վրդ. Երեցյանի

Սևակ Ռ.

Ա 411 Անտիպ Էջեր: Բանաստեղծություններ, արձակ.
/Ռուբեն Սևակ.- Եր.: «Նախի», 1995թ.- 64 էջ

1990-ին անակնկալ հայտնարերվեց Ռուբեն Սևակի
ձեռագիր մի տետրակ, ուր կային անտիպ բանաս-
տեղծություններ, բարգմանություններ, արձակ էջեր
նամակներ...

Գրքումը ներկայացնում է անտիպներ այդ տետրակից:

4702080202/36/

Ա-----95
705/01/94

Գ.ՄՊ. 8427-5

ISBN 5-550-00846-7

Ը «Նախի»
նրատարակչություն, 1995

**ՆՎԻՐՎՈՒՄ Է
ԲԱՆԱՏԵՂՄԻ ԾՆՆԴՅԱՆ 110
ԵՎ ՆԱՀԱՏԱԿՈՒԹՅԱՆ
80 ԱՄՅԱԿՆԵՐԻՆ**

ՀԵՐՈՍԻ ԵՎ ԹԱՆԱՏՈՍԻ ՄԻԶԵՎ

Դարասկզբի ավտորիացի նշանավոր նկարիչ Գուստավ Կլիմտը մի նկար ունի, որ պատկերում է ծննդարերելու պատրաստ կնոջ, ուր որ է պիտի լույս աշխարհ գա սիրո պտուղը, պիտի կատարվի սերենդագործության աստվածային խորհուրդը, սակայն, ո՛վ սարսափ, նորածինը, երեխայի գլխի փոխարեն, լերկ գանգ ունի: Կյանքը ծնում է մահ, Էրոսը ոչ այլ ոք է, քան Թանատոսի խոնարհ սպասավորը, մշտական մատակարարը, որ մահկանացուներին մղելով փոխնրապույրի անդիմադրելի գերության, պարարտ գաշտ է ստեղծում մահվան հավերժական հաղթանակի համար:

Դարասկզբին էր նաև, որ Պոլսի Պերպերյան վարժարանի Վերջին դասարանի աշակերտ Ռուբեն Չիլինկիրյանը (որը 1908թ. պիտի հանդես գար Ռուբեն Սևակ ծածկանունով), իր ավարտական շարադրության մեջ գրում էր. «Սաքիամունի՝ մահվան մեջ գտավ կյանքի գաղտնիքը: Ամեն իդերու անէացումը քարոզեց ան նիրվանայի գրկին, էին զնկդմումը Մեծ ոչինչին մեջ, մահվան բուվնը՝ կյանքին իսկ բաժակին մեջ...»:

Ավարտական այս շարադրությունը գրվել է 1905թ., բանաստեղծը և պոլսահայ գեղարվեստական միտքն ընդհանրապես ոչ միայն զգայուն նետեռում էր նորաստեղծ դարաշրջանի տրամադրություններին, այլև պատրաստ էր իր մասնակցությունը բերելու, իր քարը դնելու ընդհանուր կառուցի մեջ: Ազգային զարթոնքը դիտվում էր որպես ևլրոպական առաջավոր միտումներին մերձենալու միջոց: Հայկական նկարագիրը միայն այս կերպ կարող էր կերտվել: Անա ինչու քսանամյա բանաստեղծը Լոգան էր մեկնում ոչ որպես զավառացի,

որ ակնապիշ պիտի նայի օտար ու շշմեցնող քաղաքակրթությանը: Նա չէր զնում (ավելի նիշտ՝ տարգում) որպես մի Գիքոր, որն ուր որ է պիտի ծյուրի և մահանա «քշնամական» միջավայրի մեջ, այլ գալիս էր որպես նադրող, որ պիտի առևանգեր Եվրոպա(ին)ն, բարիս ուղղակի և փոխարերական, միթքանական և մշակութային իմաստներով (ակնարկ՝ Եվրոպայի առևանգումը ցուլի կերպարանք առած Ռևսի կողմից): Խեկ որպես բանաստեղծ նա միանգամից պիտի մտներ նամաեվրոպական գեղարվեստական կոնտեքստի մեջ: Որպես մտավորական, Ռուրեն Մեզակը որքէ առիթ չպիտի տար՝ դիտվելու որպես Եվրոպայի սիրտն ընկած մի գավառացի: Թերեվս այս հանգամանքն էլ նիմք է դարձել քանամյա երիտասարդին, ծայրամասային բարդութերից ազատագրված, ոչ միայն գերելու գեղեցիկ գերմանունուն, այլև նրան, զրեք իր տան մեջ, ապացանամատնդ կյանքի պայմաններ թելադրելու: Ռ. Սեակի և Յաննի Ապելի նախամուսնական նամակներում ոազմավարություն զրեք չկա, երկուսն էլ իրար նարարերում են որպես հավասարը հավասարի: Սա առանձին և մանրամասն զրուցի նյութ է, սակայն այս պահիս մեզ պետք է այնքանով, որքանով նարկ է նիշեցնել, որ դարասկզբի արևմտահայ միտքը վախվորած միջակի պես չէր մոտենում ոռմանտիկ տազնապներից ու սիմվոլիստական զինարքութից արթնացող Եվրոպային: Ավագ, այս վստահությունն ու համարձակությունը մենք կորցրեցինք, մասամբ էլ մեր մեղքով:

Եվրոպական գեղարվեստական միտքը դարասկիզբ էր մտնում զաղափարների վերջալույսի շողերի տակ: Իշխողն ավարտի խորհուրդն էր: Ավարտը նաև գեղեցիկ էր, նրապուրիչ, նույնիսկ այն աստիճան, որ գեղեցիկ գերմանունի ինկենին կարող էր ստիպել խենթի պես սիրահարվել մայրամուտին զնացող ծերունազարդ, բայց փառահեղ տղամարդուն՝ Կլաուգենին (Հառուպտման, «Մայրամուտից առաջ»): Դարասկզբի իդեալների մեջ մահը նրապուրիչ էր սիրո պես. Էրոսն ու թանատոսը նմանվել էին իրար: Սեակիան «Փոքրիկ աղջիկն» էլ, Հառուպտմանի ներոսունու պես, «ծեր արծիվ էր բանտում»:

**Կապույտ աշվիդ երրոր բացիր,
Կապույտ աղջիկ, պլապուլն երգե՛ր.
Քե՛զ ալ սիրո մրմունչ պետք էր,
Դուն գուման մռունչս ընտրեցիր....**

. Սևակի ամենաանմեղ թվացող բանաստեղծությունը, գրեթե ալրումային սիրերգությունը, ողբերգական դարի ամենավագերական արձագանքներից մեկն էր: Ապագա արհավիրքների գուշակումը կար այդտեղ, անշուշտ, անճնականացված: «Կապույտ աղջիկ» դարն ուր է արյունով պիտի ներկվեր (ինչպես ինքը՝ տողերի նեղինակը): Սարսափն իսկապես դիպել էր բանաստեղծին («Դամրաններ են ոտքիս նետքե՛ր...»): Ու. Սևակը բանաստեղծություն ունի «Մահազգացում» վերնագրով: Ես այդպես կվերնագրեի նրա ամբողջ ստեղծագործությունը:

Հասկանալի է, թե ներկայացվող անտիպ բանաստեղծությունների զգալի մասը ինչու բանաստեղծը չի շտապել տպագրության հանձնել. մշակման կարիք է զգացել, թերասացություն կա, վերջապես, զործը սրտովը չէր և այլն: Սակայն «Ստինքը» բանաստեղծությունը, սյուռեալիստական մոռակ բնանկարով, կյանքը և մասն միացնող իր դաժան ու նշանարիտ պատկերով կարող է իսկապես դարասկզբի զեղարվեստական տրամադրությունների լավագույն արտահայտություններից մեկը համարվել: Պատկերային իր ուժգնությամբ այս բանաստեղծությունը, կարծում ենք, ոչնչով չի զիջում Գ. Կլիմտի նկարին. կյանքի աղբյուրը, սիրո ակը դարձել է մահվան խորհրդանիշը՝ սև ակը՝ սև խաչը վրան: Այս պատկերը հուշում է մեզ նաև բանաստեղծի ծածկանվան իսկական իմաստը: Հիշենք նետեյալ տողերը «Սերը» բանաստեղծությունից, որ ասես լրացնում են «Ստինք»:

**Պտեսնե՞ս սա վիճին վրա Սեր-ակը.
Հազարներ կուլ է տվեր այդ սե-ակը.
Իր շուրեն օր մը խենքեցավ
ՍԵՐԱԿԻԾ:**

Ինչո՞ւ է անտիպ մնացել «Ստիճքը» բանաստեղծությունը: Հեղինակը պիտի որ լավ հասկանար իր խոկ ստեղծածի արժեքը: Մեզ անհայտ մի բան նրան ետ է պահել այս բանաստեղծությունը տպագրելուց:

Տեքստերի վերծանումը տեսց երկու տարուց ավելի: Դյուրին չեր միանգամից կարդալ բազմից խմբագրված, շտկված, շնչված, այնուհետև վերականգնված սեագրությունները, շնայած որ Ռ. Սեակի ձեռագիրը մեզ լավ ծանոթ է: Մեր ունեցածը բարձրորակ քսերոպատճեններ են, որտեղ բոլոր խմբագրումները և շնչումները երեսում են միևնույն սեագույնով, մինչդեռ շատ ավելի արագ և դյուրին կլիններ բնօրինակի վերծանումը, քանի որ Ռ. Սեակը սովորություն է ունեցել զրել սև բանաքով, սակայն խմբագրել է կապույտ բանաքով կամ մատիտով: Ցավոք, որոշ բառեր, շնայած մեր երկարատև ու հետևողական ջանքերին, այդպես էլ անընթեռնելի մնացին: Հուսանք, որ մի գեղեցիկ օր մեր ձեռքին կլինի բնօրինակը և կկարողանանք այդ փոքրիկ բացերը լրացնել:

Ինքնազրին հարազատ մնալով՝ պահպանել ենք նեղինակի կետադրությունը:

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԹՈՓԶՅԱՆ

ԲԱՆԱՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՄԵՆԵՐՊ

Որովհետև ինձ խոսեցան
Մեռնող վարդերն: Օ՞ն, ահավոք
Աչքեր լացին իրենց աղվոք
Դեղնած թերթե՛րը ցիրուցան:

Ու լեռներեն նեխնե վար
Վազող նովերը շոգերուն,
Ինձ պատմեցին բարձունքներուն
Խո՛ւլ վետվետումը նոգելար:

Երկնից կամարը դիտեցի
Անհո՛ւն սլարապն էր Անէին.
Գիսավորները կերթային
Արցունքներու նըման լացի:

Ու բարեկամ, ու անհամար
Մաներ՝ կմախք գարշապարով
Հոգվույս վըրա սլար դառնալով՝
Կերգեին ինձ. «Մեռիր, նիմա՛ր...»:

ՂՈՎՏԻ ԿԻՆ

Մարդն իր գանեն կխոնարնի նամակիր
Արդի կընոշ առջև՝ տժգույն բազակիր,
Որ իր ոտքին տակ մեր սրտերը զազիր
Կկոխկրտե, կանցնե ու ետ չի նայիր:

Բայց նոգնեցանք ալ ԱՇԻ խաղեն, որ Մերն է,
Ուր գրավ կառնե մեր սիրտը կինը դժնե.
ԱՇ զզվեցանք այն խնջույքեն, որ Մեղքն է,
Ուր կինն անշունչ կլքե մեզ, կհեզնե:

Ու կարոտով քեզ կնայինք. Ղովտի կին,
Որ երբ Աստված Մահը խառնեց խնջույքին,
Ետ նայեցար արուներուդ դիակին...

Կնայինք ետ, դեպի դարեր նեռակա՝,
Զի նին ու նոր կիներուն մեջ քար մը կա,
Բաժանումի աղարձանն է անիկա:

8 նույնիս, 1909

Լոգան

ԱՇ ԱԶՔԵՐ

Աչքեր, աշխատ, նոգեծով աչքեր.
Աչքեր որ կերգեք, աչքեր, որ կուլաք,
Լույսե ծաղիկներ, մշտածոր վերքեր,
Աչքեր, որ կապրիք, աչքեր, որ մեռաք...
Խավարի լիներ, կապույտի աչքեր:

Աչքեր միամի՛տ, ժպտո՛ւն, օրորո՛ւն.
Ճամբաներու եզրն ի վար մոռցըված
Անկո՛խ դաշտերու ծաղիկներ սիրուն...
Զով այգիներուն պես անստվե՛ր, անլա՛ց,
Միամիտ աչքեր, ժպտուն, օրորուն:

Աչքեր, աշխատ, բոցի մեղքեր տենդագին,
Հույս-հայրատ աչքեր, կիրքի պատարագ՝
Այրող, միսացող մենյաններ Մեղքին,
Աչքեր, որ կայրիք, կթունեք, կեռաք.
Այսանա՛ր աչքեր, բոցե՛ղ, տխրագին:

Լճացա՛ծ աչքեր, անավո՛ր, տրտում,
Հողին այնքան մոտ, անբարբառ, անբան,
Աշնան նովերեն տարվող անդադրում
Տերեի պես, որ գիտե իր ճամբան...
Լճացա՛ծ աչքեր, անձրեսոտ, տրտո՛ւմ:

Ու դուք երազո՞ւն, խնկոտ, տրտմունակ
Գաղջ գիշերներու նըման նեշտարույր
Սիրանա՞ր աչքեր, որ անտես, մենա՞կ,
Մութ կածաններեն կերպաք ի նամբույր...
Սիրանար աչքեր, խնկոտ, տրտմունակ:

Դո՞ւք, բոլոր աչքեր, նրդեններ անշեշ.
Աչքեր, որ կապրիք, աչքեր, որ մեռաք,
Եկեք մութ նոգվույս անդունդներուն մեշ
Կաթիլ բարեկամ արտասուք մը տաք,
Դուք բոլոր աչքեր, լույսի վիճեր գե՞չ:

Աչքե՞ր, որ կապրիք, աչքեր, որ մեռաք:

ՍՏԻՆՔԸ

Կյանքի Տոնն էր: Հոն էին բոլոր որդիքը Մարդուն.
Ո՞ւ անոնք, որ դեռ կապրին, ո՞ւ անոնք որ չի ծնան.
Ո՞ւ մեռելները բոլոր: Բաց երկինքին տակ անհո՛ւն,
Կանա՛չ, անծի՛ր վայր մըն էր, սառած ծովու մը նման:

Գետիննեն վեր ծառացող ծանջը մի ծուխ՝ գալարուն՝
Արյուն ու կիրք կրութեր: Կապարի շոնչ մանկենդան,
Տարածության վրա անծի՛ր, գիրկ գիրկի, մոտն ու
հեռուն.

Տրտում զույգեր Մեծ Կյանքը կրեղմնեին: Լռելյայն:

Ու Կույսերու կուրծքին վրա տաք զլուխներ սիրանալ,
Մայրեր որոնք տաժանքով կծնեին, օ՛ն, անդարձ
Մեռելներու նոր սաղմեր, ծիծին նարած փոքրեր ալ:

Արդ կապարի օդին մեջ, նսկայավա՛ռ, ահագի՛ն,
Կրանիթե Բուրգ-Ստինք մը կտիրեր երկնամբարձ,
Սուզի սև խաչ մը ցցած իր գագարի պտուկին:

ՔՆԱՑԻՐ...

Դուրսը մարմանդն իշավ,
Հեռվեն լինը հանգեցավ,
Հալած անուրջ մը չէ՞ անծիր...
Բարձերուն մեջ, ահ, քնացի՞ր:

Զյունը կիշնե տենդահոլով...
Իմ ներմակ սերս ալ դողդղալով
Թարթեանես վա՞ր մտացիր
Կմաղվի՞ վրադ, ո՞հ, քնացի՞ր:

Երգ մը չէ՞, որ կուլա նեռուն...
Լուռ օրիներգի մը վանկերուն
Նըման իմ սերըս անծանծիր
Կմաղվի՞ վրադ, ո՞հ, քնացի՞ր:

Մանը շրջեր քունիդ մեջեն:
-Հե՞զ մեռելները կանրշե՞ն:
Դագաղդ ըլլամ ես սկածիր,
Ու դուն այսպես մեջն քնացիր...

1909, 15 մարտի

ՍԵՎ ՍԻՐԵՐԳ

Անավասիկ, որ կսիրեմ եղ...

Զար, վիրավոր, ու անիծվա՛ծ, ու...*

Անավասիկ, որ կսիրեմ ես քեզի:

Ա՛լ քու ստվե՛րդ պտտցուց իմ նոգվույս

Անարձագանգ դամբաններուն մեջ անլույս,

Ու երդմնեցուց, որ դե՛ռ սիրեմ ես քեզի:

Թող այս գիշեր նոգիիս մեջ երգ մը լա,

-Ի՞նչ փոսք, թե չար, թող այդ երգը քուկդ ըլլա.

Որովհետև, քո՛ւր, կսիրեմ ես քեզի:

Ապրի՞լ, անեղ ճակատագրին միշտ նըլո՞ւ,

Մեռնի՞լ, առանց վայրկյան մը քուկդ ըլլալու,

Խոսե՛ ինձ, քույր, ա՞խ, կսիրեմ ես քեզի:

Անա նոգիս շիրիմորեն փակ ու չար,

Անա նոգիս, զօր դուն սիրել չի զիշար,

Անա նոգիս, որ կսիրե դեռ քեզի:

* Ինքնագրի աջ վերին անկյունը պատոված է, ուստի
առաջին երկու տողերն անավարտ են ներկայացված
տեքստում:

ՔՈՒՆԻ ԺԱՄ...

Քունի ժամ... Ցայգին ծայները մեռան.

Ո՞ւր են երազիս վարդերը ծիրան:

Խունկի ժամ՝ մութին ալքերեն մտան:

Քույրի՝կ, քունի՝ ժամ: Քույրի՝կ, քանի* ժամ

Կապրին հեզ վարդերը վաղաբարշամ.

Քույրի՝կ, քանի* ժամ՝ սերերն վաղաժամ:

Քույրի՝կ, քուն ունին սերերը դրուժան.

Կրնա՞ն անբջիլ նոգիներ դաժան:

Քույրի՝կ, ման ունի՞ն սրտերն անբաժան:

Քունի՝ ժամ: Իրենց ցողքին վըրան

Եղրեանինե՞րը անորոշ մեռան,

Իրենց պաշտումին՝ իրե՞նք խունկ, խորա՞ն:

Անրառ ավարտի մը մեջ սրտագրավ,

Կարծես առ հավետ, ամեն կյանք կորավ.

Քույր, պիտի մեռնի՞նք օր մ'այսպես, իրա՞վ:

Ի՞նչ, մթին մեջ լացի արցո՞ւնքըդ կբափին,

Քո՞ւյր, կուզե՞ս, որ արծանի մը պիս

Գլուխը քար...* քարափ եմ

Մըշտնչենապես, մըշտնչենապե՞ս...

9.2.1909

Lausanne

* Անընթեռնելի բառ:

ԹԱՂՈԽԸԸ

Ահա նորե՞ն դալարել* ես միամիտ
Դու՛ մոռցված ափի՞կ մը նող, ափ մը նող,
Հեռուներեն ուխտի կուգամ գարունիդ,
Ուխտի կուգամ՝ որպես խունկի մը մըխող:

Օ՛ք մը... օր մը քու նակինքի քավիշիդ
Վրա էք, նո՞ս, երբ Անոր նետ, քով ի քով
Ես երջանի՞կ եղա... Սիրույս՝ այն վարդիդ
Վայրի վարդի անրիծ իրանը կորող:

Ինչպես թռչուն մ'իր սըլացքին մեջ վայրէջ,
Կուգա մեռնիլ, նիտը ծըռած մարգիդ մեջ.
Իմ ալեսոր տըղու սիրտըս, ա՞յնպես, նոս.

Մղրիթներու նովվերգության մեջ անխոս,
Քովիկն ի վար փոսուայիդ, որ կայրի
Հո՞ս, նո՞ս թաղիլ կուգեի սի՞րտըս վայրի...

* Մոտավոր ընթերցում:

ԱՆՄԻՏ ԱՅԳԵՐԳ

Զմրան առտուն Դուրսը մութը կիսալի:
Ես կանքիմ քե՞զ, նեռավոր պաշտելի.
Եկո՞ւր, նստե, մո՞տ, բարձիս մոտ սնտուսի:
Խուզը տաք է, քեյը մեզի կսպասի:

Հեղուկը, տե՛ս, կանհետանա, կզմայլի,
Մանիշակի, վարդի գույնով գոզն է լի.
Զի՞զ կամպանա: Կյանքին ծնունդն ալ այս է:
Հետո շոզին խոլ նկարներ կնյուսի:

ԱՅ կփնտրե կարծես, կուռի, կդոդա,
Երազանքի, Սիրո շրջանն է անա:
Հետո, տեսա՞ր, շոզին մեռավ, ա՞ւ չի կա...

Ու դուն չիկա՞ս, փախավ ստվերդ նեռվից:
Ա՞խ, ինչո՞ւ զուզգ շոզիներու պես անմես
Չըլլայինք ձեռք ձեռքի քեզ նետ - քեզի նետ...

Զմրան առտուն: Դուրսը մութը կիսալի:

ՈՐՎ ԴՈՒՆ, ՈՐ ԿԱՆՑՆԵՍ

Ո՞վ դուն, որ կանցնիս այս կորած ճամբեն,
Ահեղ աչքերուդ մեջ վիճի մը պես
Գինիին վերջին ուման է, որ կըմափես:

Կիորինիմ* թորված-գլխանակ,
Անոնց, որ փախան որպես փլատակ,
Անոնց, որ մեռան քարին, շուղին տակ:

Ահա մենակ եմ, ու դուն վերջինն ես,
Որ իմ հոգնարեկ քերթողի ճամբես
Կանցնիս իրիկվան ճառագայթին պես:

Դուն նավետ ժայռուն ալի դագաղն ես՝
Ուր ամբարտավան կյանքս, տղու պես,
Կուզեի բռչիլ աշխարհին անտես:

Թռչիլ... Սակայն դուն կերթաս անզգած,
Դագաղի մը պես, կուրծքդ՝ անկասկած՝
Հազար որդերու մահով ծանրացած:

Դագաղիդ մեջ ինձ ալ շնորհեիր մի տեղ,
Բայց կերթաս, ու ես կդիտեմ ահեղ
Իրանիդ նոնին՝ մահորեն շքեղ:

7 հուլիս, 1909. ՀԱՐԵՔՉԱՐՔԻ
Old India

* Անբնակոնելի բառ:

ՏԵՇԻ, ՄԵՂԱ...

Սև մարմարի սրբազան սյունի մը պես սեգ էր ան.
Ու սեգ, ո՞ւ կույս - թե կույս է կատաղորեն տարիավոր
Շքքունքներու չի՝ խմված, չապրված նև՝ քը ծորուն:
Ու սեգ, ո՞ւ կույս - թե կույս է ցող չի ծծած վարդ մը նոր:

Նոնիի մը մեջ ինկող երազին պես մո՛ւթ էր ան.
Ու մոթ, ո՞ւ լույս - թե լույս է ա՞ն, ինչ որ կար անավոր
Լույժ խավարի իր այրող աշքերուն մեջ անսահման:
Ու մոթ, ո՞ւ լույս - թե լույս է ամրան զիշեր մ'ախտավոր:

Բարե՛: Ինչպե՞ս հոգիս* դավանանեց իրեն դեմ:
Ումայ մը արյուն... Տե՛ր, մեղա... Ու ինչպիս իմ
Բանաստեղծի ծեր հոգիս- հինավուրց քուրմ տիրադեմ-

Լուռ դաշտերու երազկոտ անծայրությանը վըրան,
Մեղքի օր մը՝ Տարիանքի սև պատարագը տոնեց,
Իմ ողջակեզ կիրքերուս՝ իր կուսությունը խորան:

Սև մարմարի սրբազան սյունի մը պես սեգ էր ան:

* Խմբագրված, այնունետեւ չնշված բառ, որ
մոտավորապես ընթերցվում է որպես «հոգիս»:

ՀԻՆ ՀԱՐՍՆԵՐԳ

Քայլերուդ ներքի վարդի թերթեր բյուր,
Մուշկի, նաև վեհ բույրեր երկնասփյուռ,
Մեռնեի՝ գիճով նեքերուդ զեփյուռ:

Մետաքս նաև վեհ արցունք չի կացի.
Մի՛ լար թելերուդ ետին արծաթի,
Այս գիշեր լուսնակը քե՛զ կծաթի:

Իրանիդ՝ շղարշ անգին թեհեզին,
Կուրծքիդ՝ մարգարտի լանջակ ասպազեն:
Եկո՛ւր, իմ երկու աչքերս քեզ կուզեն:

Ուկի մունակովդ եկուր, նարս իմ քո՛ւր,
Հետքերդ՝ Գանանու յուղեր նեշտարուր,
Պենկալիու վարդեր՝ դեմքիդ կաթնաթուր:

Ա՛յս, կույս շրբներուդ նեքը սիրազե՛զ:
Եկո՛ւր, սեմիս վրա խոյ մը ողջակեզ
Իր արյունն ազնիվ սլիտի ծոնե քեզ:

Մի լա՛ր, քույրիկ, նույս նավա՛տքդ ալելու:
Սուրբ առագաստին մոտեցիր նըլու,
Քու շքեղ արծանդ զոհարերելու...

ՍԿԻԶՅԸ ԳԵՐԻ ԱՆՀԱՅՏ

Խոկական բանաստեղծի կենսագրության սկիզբը նշանավորվում է մշտական մղումով դեպի անհայտը: Խոսքը ստեղծագործական կենսագրության մասին է: Ռուբեն Սեակը մասնավոր գրված ուղեգրություններ չի քողել, սակայն սիրել է նանապարհորդել, նատկապես Շվեյցարիայում, ուր ապրեց ինը տարի: «Ճամփորդություն» վերնագրված անտիպը դարձյալ դժվար է ուղեգրության ծանոթ ժանրին վերագրել, չնայած ճայրեծար ուղեգրության փոքրիկ օրագիր է: Սա նանապարհորդության ծանոթ նկարագրությունը չէ, սա ավելի շուտ փաստումն է արևմտահայ իրականության մեջ տիրող այն ուղղվածության, այն նիմնական նայացքի, որը բնորոշում էր դարասկզրի գեղարվեստական նիմնական միտումները Պոլսում: Նվաճվում էր Եվրոպան: Բոլոր իմաստներով: Մեր ազգային ինքնազիտակցության զարգացքն անպայման պիտի անցներ Եվրոպական մայրաքաղաքներով: Նպատակը Փարիզի կամ Բելլինի կցորդը, ջանասեր աշակերտը դառնալը չէր, այլ միատեղ աշխատելու ձգտումը: Աշխատանքն արդեն սկսված էր: Հեռու չգնալով, կարող ենք օրինակներ բերել նենց Ռուբեն Սեակի ժառանգությունից, նանավանդ մինչև 1909թ. ապրիլը գրված զործերից:

1906թ. Ռուբեն Սեակն արդեն լոգանի նամակարանի ուսանող էր: Հավանաբար ձմեռային արձակուրդի է նկել ծննդավայր և վերադարձել նշանավոր «Արևելյան նեպրեացով»: Խորհրդանշական է այս նամփորդությունը՝ դեպի Եվրոպայի սիրտը: Եթե սա պարզ ուղենություն լիներ, բանաստեղծը նազիվ թե թողներ օրագրային այս նշումները, որոնք ամրուցական տեսք

ունեն և որոշակի կառուցիկություն: Սա ներխուժում է դեպի մայրցամաքի խորքը, աստիճանական նանաչում: Գիտակցարար, թե անգիտակցարար է կատարվել, սակայն բանաստեղծը նարկ է նամարել ստեղծագործական վաղ շրջանում արված այս նորերը պահպանել: Հարազատ ինչ-որ բան է տեսել սրանց մեջ:

Օրագրային նշումներ են նաև «Վերջալուս» վերնագրված էջերը: Ըստ որում՝ ուսանողական առաջին շրջանի: Սա նախորդ ուղերձության միուս երեսն է, կարուտը, անձկությունը. «Քաղցրիկ նուշեր, ինչո՞ւ կտանչք դիս»: Սակայն քանիմեկամիա ուսանողի այս կարուտախոտը չորս տարի նետո պիտի երեար, բայ առ բառ, մեկ այլ բանաստեղծության մեջ, որը, թերևս, ոչ միայն Մեակի, այլև նաև բանաստեղծության գլուխզործոցներից մեկն է: Խոսքը «Ո՛վ իմ Հայրենիքս...» բանաստեղծության մասին է: Օրագրային այս նշումի վերջին տողերը եղբափակում են նաև նշված բանաստեղծությունը, սակայն՝ ավելի ոպերագական:

*Քալե՛: Մինչև ե՞րբ... Քալե՛ կուրորեն,
Քալե՛, մինչև որ Արևն ճրակեց
Եր մարը մտնե նորեն ու նորեն
Ու օ՞ր մթ ալլե՞ցս չի ծագի քեզ...
Քարե՛... Կյա՞նք է այս... Քալե՛ կուրորեն:*

Մի փոքր անսովոր է, որ Ռուբեն Մեակը վերնագրել է իր օրագրային գրառումները, որը, սակայն, եղակի երեսություն չէ: Մինչդեռ, կարծես առաջին անգամն է, որ կարդում ենք վերնագրված նամակ՝ Ռեքենս Պերպերյանի որդուն՝ իր դասընկերոջը: Մենք առիք ունեցել ենք արդեն ճրապարակել Ռ. Մեակի «Ռ. Պերպերյանի հիմանդրությունն ու մահը»: Ապագա թշնիկ գրառումներ՝ մասնագիտական մի շարք տերություններով լեցուն: Այս մեկը՝ նամակը, գրվել է վերոնիշչաւ նույիթից ավելի ուշ: Հայտնի է, որ Ռ. Պերպերյանը Ռուբեն Մեակի սիրելի ուսուցիչն էր, որ թե որպես մանկավարժ, թե որպես մտավորական ու ֆիլիսոփա կարեար դեր է խաղացել բանաստեղծի նակատագրում և նրա ստեղծագործական նկարագրի կազմակորման մեջ: Գմբար է ասել, սա զրգել է որպես նամա՞կ, մտորում, թե՞ օրագրային նշում: Եվ արդյո՞ք նաևակն ուղարկվել է:

հասցեատիրոջը: Խնչո՞ւ է այս մտորում-նամակի տեք-
ստը հայտնվել, ըստ որում՝ անթերի մաքրագրված,
սեազիր բանաստեղծությունների կողքին: Որքան մեզ
հայտնի է, Ռ. Սեակը սովորություն չի ունեցել իր
թղթերի մեջ պահպանել նամակների երկրորդ օրինակ-
ները կամ սեազրերը: Դա նույնիսկ անհնար կլիներ
անել, եթե նկատի ունենանք, թե ինչպիսի ծավալուն
նամակագրություն է ունեցել բանաստեղծը:

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԹՈՓՉՅԱՆ

ԱՐՁԱԿ

ՃԱՄԲՈՐԴՈՒԹՅՈՒՆ

1906, 22 նունվար.

Գիշեր էր արդեն:

Կայարան կմտնեի...

Կյանքին մեջ վայրկյաններ կան, խորհրդավո՞ր ու գնուակա՞ն վայրկյաններ, ուր մտնելե առաջ սարսու մը՝ տարօրինակ հուզում մը կզգա մարդ իր երակներուն մեջ: Օ՛հ, շատ հուզիչ վայրկյաններ են անոնք: Ազգա թե խորհրդավոր այդ սպահուն մեջ պիտի փակե՞ս, պիտի բաղե՞ս կյանքը զոր ապրեցար ցարդ, ու պիտի ստեղծես նոր կյանք մը քեզի համար: Ու մարմաջ մը, տարօրինակ տենդ մը կուզա վրայ խնթալո՞ւ, լալո՞...

Գիշեր էր արդեն. ու, վարանու, կայարան կմտնեի:

Տենդագին եռուզեռում մը կար կայարանին մեջ: Համբորդներ՝ որոնք նոս-նոն կդիմենին փութելու, կառախումբեր՝ որոնք սուր նիշերով կնեռանային, բարեկամներ՝ որոնք նամբորդներու նրանեցտի կփութային:

Ու լամբարներուն լույսը իր անձրեց կցաներ առաստաղեն, ու սիկարներուն մուխը կուրովեր ողին մեջ, ու գավաթներուն շոխնքը կինչեր սեղանի սեղան:

Շվարա՞ծ կմտածեի...

Կմտածեի նեռավոր սիրելիներուն վրա՝ որոնք լրած էի անխիղն, կմտածեի բարեկամներուս վրա՝ որոնց նեռանալը դիտեր էի ծեռքի ուժգին սեղմումներեւ վերջ, ու խավարով լեցուն Ապագայիս վրա կմտածեի:

Մեկնման ժամը հասեր էր արդեն. շոգեկառք մտա:

Շա՞տ տխուր է բաժանումի վայրկյանը: Կառախումբին ամրողջ երկարությանը վրա լացող խեղներու շարք մը կտևսնես. մին իր աղջիկը կնամրուրե, մյուսը իր կնկան նետ կողչագուրվի. ուրիշ մը իր բարեկամին ծեռքը կսեղմէ ուժգին:

Ու ահա՝ դժվարին վայրկյանը: Գիշերին ու լուսիան մեջ վայրաշարժը կսուլ երկա՛ր, երկա՛ր. ասի նետին նրամեշտն է նեռավոր սիրելիներու... Ու անխվները կցնցվին, ու սրտերը կցնցվին: Կառախումբը կնառաջանա:

Շվարած շուրջս կդիտեմ. ո՞չ ոք կա քովս սրտակից, ո՞չ ոք բարեկամ! Միայնությունը կսարսէ նոզիս: Գլուխս պատուիաննեն դուրս կնանեմ: Տոկոս առ տոկոս ամեն բան մուրին մեջ կրագվի. կայարանը կկորսվի նետզնետե, ու բարեկամները գիշերին մեջ խուսափող առվերներու կնմանին:

Պատուիանիս առջև կանգնած դուրսը կդիտեմ անշա՛րժ, քարացա՛ծ: Պոլիս տակավ կխուսափի տեսողութենես: Կուզեմ վերջին անգամ մը, ա՛ն, վերջին անգամ մը գոնք կառախումբիս պատուիաննեն տեսնել այն տեղերը ուր տարինե՛ր ամրողջ ասլրեցա. կուզեմ տեսնել Վոսփորը՝ իր չքնաղագեղ ափերով. Բերան՝ իր բարձրագեղ դիրքին մեջ. Սկյուտարը՝ իր խորհրդավոր ստվերներուն ետին: Բաց մուրը պատեր է ամեն կողմ: Քաղաքը կսպառի քիչ-քիչ. արվարձաններու փոքրիկ տնակներն ալ կկորսվին միամիտ. ու ա՛լ Պոլսեն դուրսը ելած ենք:

Մարմարան իր հանդարտ փեշերը կտարածե լա՛յն,
լա՛յն՝ մինչև նեռավոր նորիզսները:

Ու կնառաջանանք:

Ծո՛վն շալ կկորսվի: Ու կնառաջանանք:

Գիշեր է: Կդիտեմ դուրսը պատունանես:

Հողը իր հանդարտիկ քունը կննչե գիշերին
ամայության մեջ: Դա՛շտ, դա՛շտ:

Հուզումը կընկ նե զիս:

Խցիկին՝ անկյունը, կծկտա՛ծ, ննջա՛ծ, կմտածին:
Կորսված սիրելիներու կարուտը կնմլե նոզիս: Կուզեմ լա՛ւ...

* * *

Առավոտը ծագեր է արդեն:

Պուլկարիո մեջ ենք:

Աղօտ լուս մը կմազվի տակավ կապարե երկնքի,
նեռառվոր անտառներու մշտչային տուերները խորհրդա-
վոր հանգամանք մը կուտան տեսարանին:

Զյո՞ւն, ծյո՞ւն... Լայնատարա՛ծ, անբի՛ծ սպիտա-
կություն մը ամեն տեղ: Հեռու՞ն, մենակոր նոկա ծառ
մը, աննո՞ւն դաշտերու դարավոր նուսանատությունը
կուլա կարծես:

Դա՛շտ, ծյո՞ւն:

Ֆիլիպե նորություն մը կըլլա վայրկյանի մը
համար՝ դաշտերու այս անվերջ միօրինակության մեջ:
Ու Ֆիլիպեն վերջ կսկսին լեռները, բա՛րձր, բա՛րձր
լեռները: Պուլքաններն են տառնք:

Օ՞ն, որքա՞ն խորխատ է իրենց նակատը ու որքան
պայծառ: Զյոնը արծաքի պասպառն պատունան մը կարծես
նյուսեր է սա դարավոր նորաներուն: Իրենց սպիտակ
լանջքեն մշտարուխ արշալո՞ւս մէ, որ կարծես կնոսի
շարունակ, կնոսի՛... Ե՞նչ զեղեցիկ են իրենց կտապտագեղ
նակատները:

Կհառաջանանք:

Լեռները կսուրան, տեսարանները կփոխվին՝ նետըգ-նետե ավելի հմայիչ, ավելի սրտագրավ:

Մութը կբանձրանա տակավ:

Լերանց ստորոտը սիրուն քաղաք մը կնլվլա փոքրիկ մանուկի մը պես: Սոֆիան է: Գեղեցիկ շենքեր, լայն պողոտաներ, լուսի փոքրիկ կտուցներ ծառուղիներու երկայնքին՝ նրապուրիչ տեսարան մը կկազմեն մութին մեջ:

Ու կանցնինք:

Կդիտեմ դաշտերուն խոյս տալը արա՛գ, արա՛գ: Շոգեկառքը կսուրա շարունակ իր նեքոտ վազքովը: Ի՞նչ գեղեցիկ է տենդագին բոիչքը սա կայծերուն, որոնք բուրդ-բուրդ մուխին նետ կանցնին պատուինա-նիս առջևեն:

* * *

Այս գիշեր ուժգին երաժշտություն մը կարբնցնե զիս ընդուտ:

Սերափիո Փիրոք կայարանին առջև կեցած ենք: Զյունը ծածկեր է գետինները ներմա՛կ, նեփ-ներմակ: Զյուներուն վրա Սերափիո աշխույժ քամի մ'է որ կպարե զվարքորեն. երաժիշտները իրենց ծայնին բոլոր ուժգնությամբը կերգեն իրենց տոնմիկ երգերը: Մարդ պետք չունի անոնց լեզուն գիտնալու՝ զմայլվելու համար այդ սրտահույզ երգերեն:

Ու տխրագին աղաղակներ կբնդան օդին մեջ, ու գեղջուկ երգեր կցնցեն սրտերը. ու չուբակներ կինծեծեն գիշերին մեջ... Ու այս բոլորը՝ նրաժեշտ մաղթելու համար այն մի քանի բարեկամներու որոնք պիտի մեկնին. Ո՞վ գիտե, թերևս առնավե՛տ:

Որքա՞ն դժվա՞ր է բաժանումք: Հեռավոր մտերիմ-
ներու նիշատակը կսարսէ նոգիս...

* * *

Ու կնառաջանանք միշտ:

Ի՞նչ սքանչելի է սա լեռներուն տեսարանը մորթին մեջ:
Թուփիբը՝ որոնք ծյուներու տակ կկրին. ժայռեր՝
որոնք գիշերին մեջ կխոկան. Լիներ՝ իրենց երազին
մեջ սառած, քարացած:

Տեսարանները կփոխվին արագ-արագ՝ երբեմն
նիշանալի, երբեմն ահավոր:

Հոս ծյունապատ լեռներու շղթաներ են՝ որոնք իրենց
կողերը կցոլացնեն գետերու շինչ նոսանքին մեջ. նոն
ապառաժի նոկա զանգվածներ՝ որոնք անդունդին մեջ
սիտի գաճակիթեն նանկարծ կարծես: Աստին նիշանալի
անտառներ են, որոնք ծյունն ձաղիկներուն մեջն
կժարուին. քիչ մ'անդին շրվեծներ՝ որոնք մքասովեր
ծորերու մեջ կբավալին՝ մոնշելով կատաղի:

Ու կսուրանք, կսուրանք միշտ:

Մեր նամրուն վրա կույտ-կույտ նոկա ժայռեր
եկեր ցցվեր են դիտելու նամար կարծես քաղաքակրթ-
բության այս գործիքը. որ լեռները կնեղքի ու
շշալով, շաշելով կսուրա միշտ դես նառաջ:

Ու ահա՛ լուսոք, ահա՛ տունի ստվերները, ու ահա՛
կայարանն ալ: Պելկրատ ենք:

* * *

Առավոտուն կարքնեամ:

Հումզարիտ!

Եվրոպին ծոցն ենք ա՛լ: Հոս ամեն բան կմատնի
Եվրոպան: Ա՛լ լոված վայրենի նողի պատոս մ'անզան
չես տեսներ: Ամեն տեղ նարբակած է, ամեն տեղ՝ մշակված:

Անծայրածի՞ր, անսահմա՞ն դաշտ մ'է սա Հունգարիան: Ժամերով, ժամերով կհառաջանաս առանց որ աչքդ կարենա որոշել նողի փոքրիկ բւրակ մը նեռավո՞ր նորիզոններու վրա:

Որքա՞ն սիրուն:

Գեղեցիկ կայարաններ, ներմակ փոքրիկ տուններ, նանդարտիկ ամբարակներ:

Ու դաշտերը, ու գետակները, ու պուրակները լոգանք կընեն գարնանային տաք աղվո՞ր արևու մը նառագայթներուն տակ:

Հեռուն, ծառերուն ետին, քարի ծխնելուզի մը մուխը կգալարվի: Դաշտերուն մեջ ջաղացքի մը նեռանկարը իր բազուկները կտարածե:

Ի՞նչ գեղեցիկ! Ենակներ՝ ծառերով եզերված, գետակներ դաշտերուն մեջ խողխողուն, զյուղակներ՝ որոնք պայծառ երկինքի մը տակ կժամանի:

Կհառաջանանք միջտ:

Ու անա՞ մեծ քաղաքը, որ կերեկ նեռվեն: Պուտարեշքն է:

Բայց արդեն իսկ մութը կսկսի իջնել, ու տեսարաններուն աղվորությունը գիշերին մեջ կկորսվի:

* * *

Կոուրանք:

Բայց ուշադրություն: Ի՞նչ նրաշալի է բացերը սա լամբարձներուն, որոնք շարք-շարք կերկարին մուրին մեջ, նեռո՞ւն:

Կմոտենանք տակավ: Ստվերները կորոշվին քիչ-քիչ, քաղաքը կտարածվի մեր աշքերուն առջե իր բոլոր գեղեցկության մեջ:

Վիեննան է, նամակ լույսերու՝ մեջ: Հոկտ շենքեր,
լայն պողոտաներ, փառավո՞ր նրապարակներ, ամեն-
քըն ալ լույսերու մեջ:

Ու այս բոլոր շքեղություններու վրա կուզինք
նիանալ երկա՞ր, երկա՞ր:

Կշարունակենք սակայն մեր վազքը:

* * *

Ի՞նչ նմայիչ տեսարաններ են ատոնք! Ի՞նչ
գեղեցիկ լեռնաշղթա, ի՞նչ գեղեցիկ երկիր!

Լեռնե՞ր, բա՞րձր, միշտ բա՞րձր, մեն մյուսին
խտեալեն ավելի բա՞րձր: Զունի նոկա կույտեր՝ իրենց
գահավիժումին մեջ լեռներու կուրծքին փարած: Զուրի
կատաղի նոսանքներ, որոնք մռունչներո՞վ փրփուր-
ներո՞վ կժայթքին լեռներու կողեն՝ իրենց բողոքը
գոռալու նամար ո՞վ զիտէ որո՞ւ: Անդնդախոր ծորեր՝
որոնց մեջ նոռետեսական նուսանատության մը մռուն-
չը կա խորո՞ւնկ, խորո՞ւնկ:

Ու ի՞նչ նիանալի է ու ծյունափառ նակատը որ
արեւոն նառագայթներուն տակ ուկու ու արծարի
պսալդուն ցոլքեր կփոխե: Ու ի՞նչ վեճ է ու ալեներ
գագաթը որ վե՞ր, մշուշի ամպերեն վե՞ր կիանգնի,
երկնափառ գեղեցկությամբ մը:

Օ՞ն, նրաշալույս, նրաշափա՞ռ...

Ողջուն Ալսյաններ, ողջուն!

* * *

Կոտրանք:

Տեսարանները միշտ կփոխվին՝ մին մյուսն ավելի
չքննալ:

Վարը՝ խորունկը՝ ծորին մեջ, փոքրիկ գյուղեր,
ծյուներու տակ կքնանան նանդարտիկ: Հոս-հոն տե-
րևաբափ մերկ ծառեր դաշտերուն մեջ կդողան:

Լերան կողին վրա գեղջուկ մատուռ մը իր սուր
սլաքը կարձակե վեր: Վտիտ նամբա մը՝ գյուղեն
դեպի մատուռ՝ զարիվերին վրա կսողար:

Ցյուրիխ լինը իր նստակ նայելիին մեջ լեռներուն
ցոլքերը կսարսե:

Ավերակ դդյակներ՝ նեռվե նեռու՝ լճափին կար-
կառուն ժայռերուն վրա, անցյալին սուգը կխոկան:

Ու կհառաջանանք:

Ալեփառ լեռներու մեջ Նեռշաքելի չքնաղ լինը
կսարսուա: Երկինքի տակ տարբեր երկինքը մը ինքն ալ:

Մութը կծնի քիչ-քիչ: Լինը կսովերոտի:

Հեռուն, անորոշին մեջ, նին ամրության մը
ստվերագիծը կորոշվի:

Ավելի անցին, եզերքին վրա, քաղաքի մը լույսերը
կայլալան ջուրերուն մեջ: Նեռշաքելն է:

Մութը կթանձրանա տակավ: Լինը կննչե:

Կհառաջանանք:

Ու ի՞նչ է այդ քաղաքը, որ գիշերին մեջ իր
լույսերը ցանցներ է խորհրդավոր:

Այդ քաղաքը - ծայնս կդողա նուզումնեն - այդ
քաղաքը Լոգանն է...

Անա արելը իր մարը մտավ: Արյունի դողդող գիծեր երկարեցան ամպերուն եզերքները. ստվերը ննշեց նեռավոր նորիզօններուն վրա. ու լեռներուն նրաշեկ գագաբները սառած մնացին:

Կքալեմ:

Անա՝ անցորդները, անա՝ գործավորները, կառքերը, ձիերը:

Ամբոխին մեջ կորսված կքալեմ: Տիրությունը կծանրանա ներսիդիս: Մրտիս մեջ զգացումներ կմսին: Աքալեմ շվարած, նապնեպով, մոլորուն:

Արելը իր մարը մտավ: Մեռնող վերջին ցոլքերը կտանչին զիս:

Այս օրն ա՛լ մարեց իր լույսերը: Ու ես կքալեմ, կքալեմ. նե՞զ ուզկոր:

Անձանո՞ք նողերու վրա, անձանո՞ք նորիզօններու մեջ:

Լայն փողոցին սալահատակը կննչե ոտքիս տակ: Մեծ շենքերուն քար պատերը սառն անտարբերություն մ'ունին: Մարդերը կանցնին. անոնք չունին վաղեմի ծանոթներուն ակնարկը: Ու փոքրերը շեն ժամտիր քեզի աղբարիկներուդ պիս:

Վաղեմի՛ պատկերներ, տարտա՞մ գիծեր, քաղցրի՞կ նուշեր ինչո՞ւ կտանչեք զիս:

Մտածել նեռավո՞ր զյուղին վրա. արտերուն եզերքը սողոսկող նողի վտի՛տ, բարեկա՞մ արահետներուն վրա. ննամենի տուներուն մեջտեղ քնացող մենավոր փողոցին քարերուն վրա, որոնք քու անիլդ տեսան և քու նախահայրերուդ անիլը տեսան. մամոռ՛տ, նինցա՞ծ պատերուն մտերմիկ ժայիտին վրա:

Ու մտածե՞լ այն բույնին վրա, որ քուկդ է, քու եղբայրներուդ, քու քույրերուդ, քու ծնողներուդ է. օ՞ն, պաշտելի՝ պաշտելի՝ բույնին վրա՝ որուն պատերուն, թշվառ օր մը, նրաժեշտ տվիր՝ նետվելու նամար այս անձանոք երկինքներուն, այս անձանոք երդիքներուն տակ:

Ու մտածե՞լ մանուկ տարիներուդ վրա՝ երր պայքարը, նոգնությունը, ու տառապանքը, ու աննուսությունը չեին լեցվիր ներսդ, ու երջանիկ էիր դեռ. օ՞ն, մտածել այդ նեռավոր տարիներուն վրա, արդեն խսկ կորսվա՞ծ:

Երա՞զ նուշքեր, մեռա՞ծ նուշքեր, ինչո՞ւ կտկարացնեք իմ քայլերս:

Արել իր մարը մտավ, ու ես կուզիմ քալե՞լ:

Քալե՞ դժբաղդ անցորդ:

Սիրելիներդ ճգեցիր ևտիդ, նեռավոր նողերու վրա քու կարոտդ կուլան. լքած երջանկություններուդ հձջյունը քեզ՝ կկանչե: Զսպե՛ արցունքոտ սերերդ. ևտիդ մի՛ նայիր, ու քալե՛:

Քալե՞ նոր տառապանքներու, նոր աննուսություններու նամար. քալե՞ անիմաստ կյանքիդ ողբալի նամբան. քալե՞, քալե՞, մինչեւ որ արել նորեն ու նորեն մարը մանե ու ա՛լ չի ծագի քեզի նամար...

Սիրտ մը դրին կուրծքիդ տակ, միտք մը դրին գանկիդ մեջ. «ապրե՛, ըսին. պիտի մեռնիս»:

Զգա՞լ՝ տառապիլ. խորհի՞լ՝ տառապիլ. տառապիլ ու քալել՝ մինչեւ որ մեռնիս:

Արել իր մարը մտավ, ու ես կքալեմ դողդոջու՞ն: Քալե՞, կյանքն է այս:

Շահան,

Արցունքով լեցուն նամակդ ստացա. խեղն բարեկամ, այդ որքան նուսանառություն, այդ որքան դառնություն: Ո՞ւր է քաջությունդ, կյանքին զանազան երեսւթերը դատելու նամար ո՞ւր է պաղարյունությունդ, և ո՞ւր է իմաստասիրությունդ:

Դուն այնքան տկար չեիր առաջ, սիրոտ միշտ բանականությանդ նակակշոյն տակ էր. այնքան չեիր զգար որքան կխորնեիր, ու երբ խնդիրը այլոց դժբաղդության վրա էր՝ գիտեիր լրջորեն ու սանութեն տրամարանիլ: Ի՞նչ կընիս նիմա, կուլաս⁶. Շահան, բայց միթե իմաստասիրելու տարրե՞ր շափ ու տարրե՞ր կշիռ ունիս ուրիշներուն նամար և գուկիններուդ նամար:

Ի՞նչ է այս ողբդ: Մոռցա՞ր ուրեմն թե մենք բանավո՞ր և կամավո՞ր մարտի ենք: Կո՞մքը, Շահան, կյանքին զերազույն գործիքը, բարոյական մեծագույն ույժը, ա՞յն որ կարող է ամեն բան խորտակել և ամեն բան վերականգնել, կա՞մքը, նուսանառության դեմ մաքառելու միակ միջոցը, զերմարդկային կամքը, ի՞նչ ըրիր զայն, Շահան:

Խորտասիլի՞ս: Թող որ իջնա արցունքդ, ու արցունքիդ նետ սրտիդ խոջո՞ր տրումությունը: Վա՛խ, ինչո՞ւ կխարես ինքզինքդ, ինչո՞ւ կերազես թե այն որ զնաց, սիրտի վերադառնա քերես... Ինչո՞ւ կթողուս որ ցնորքներու մոգական ամսերու մեջ առաջնորդի գրեզ տրումությունդ: Մտածե՛. իրականության նորի-

զոններեն մի նեռանար, և խորհի որ օր մը ամենքս ալ խեղն զոնները պիտի ըլլանք այդ ցուրտ իրականության:

Նաբոլեն ափ մը թշվառ նողի մեջ ամփոփեց իր ամբարտավան մարմինը. Մյուսն լացավ ու մեռավ. Պերպերյան նաևկարծ մարեց իր նրագը...

«Անոնք չի մեռան,- կգոչեն մարդերը,- անոնց անունը ամեն շրբներու վրա է, անմա՞ն է անոնց նիշատակը»:

Վա՞խ, որքան տղա են մարդերը, ու որքան ծանծաղ իրենց մխիթարանքներուն մեջ:

Երբ սիրտը կդադարեցնե իր նամաշափ գործունեությունը, երբ ուղեղային խուլ կենդանությունը կսառչի, երբ տաք շունչը առհավետ կխուսափի բռքերեն, ավա՞ղ, ի՞նչ նեզնություն է խոսիլ անմանության վրա:

Մարդ անմա՞ն է որքան ատեն որ ժպիտը կծլի իր շրբներուն վրա, որքան ատեն որ իր աշքերը կյանքին նուրտկը կփայլատակին, որքան ատեն որ նակատը կնակի մտածումներու բեռին տակ:

Իսկ երբ բոլոր այս ժպիտներեն ու նայվածքներեն ու մտածումներեն վերջ ուրիշ բան չէ մնացած երես ոչ միսի վատ կույտ մը, անշունչ ու անշա՛րժ. մարդկային ի՞նչ տկարություն է խոսիլ Անունին վրա որ պիտի շարունակե ամենուրեք նիշիլ, ու փառքի՛ն վրա որ իր ներքի դիակ մը ծածկող ոսկիներու պատմունանի մը պես պիտի շողա, ու նիշատակին վրա, որ երբեմն պիտի ալեկոծե սրտերուն խորքը, ու Մարմարի Արձաններուն վրա զոր մարդկային տիսմարամտությունը պիտի կանգնե՛ քարեղեն կույտով մը փոխարինելու նամար զգացումներու և մտածումներու կույտը որ ո՛չ ևս է:

Ո՞չ, ո՞չ: Իգու՛ր, իգուր այս քոլորը: Անո՛նը, փա՛ռքը, ճիշտա՛կը, արծա՛նը խեղկատակ դրսեերեւույթներն են միայն այն անոելի ու անխմատ ողբերգության որ կյանք կկոչվի: Ու Անմանություն բառը այն ամեննեն եղելի բառն է զոր տառապող մարդկությունը կրցած է ստեղծել իր մանվան անկողնին մեջեն:

Հրափակ աստղերը կսառին, գիսավորներ կկորսվին խորհրդավոր գիշերներուն մեջ, ամրող նամաստեղությունները կծնին ու կմեռնին, քոլոր բուսական ու կենդանական աշխարհը կխոնարհի միենուն մանգաղին. ու միայն մա՞րդն է անման... Ե՞նչ ամբարտավան ու եսամոլ գաղափար: Անմա՞ն, բայց ինչպե՞ս, և ո՞ւր, և մինչև ե՞րր...

Ո՞չ, ո՞չ, խեղն բարեկամս, այն որ գնաց, չի պիտի վերադառնա: Որովնեսու Մանը բացարձակ է ու նավիտենական ու տիեզերական, որովնեսու Մանը ճշմարիտ է, թերեւ միակ ճշմարիտ իրողությունը այս երազ-կյանքին:

...Ու այս մտածումներեն վերջ երր մեզի կուգա իր նայվածքը անու՛ց, նառագայքո՞ղ և խմատո՞ն նայվածքը զոր ստացա իրմե բաժանումի սպանուն. ու իր նամբույրը՝ նավե՛տ տրտմակոծ նակախ վրա. ու իր մաղթանքը՝ «մա՛րդ եղիր, տղաս...», երր այս քոլորը միտքս կուգան՝ աշխատելու ույժը կլքե զիս, ու աշքերս տրտմութեննեն կշորնան:

«Մա՛րդ եղիր...»: Բայց չէ՞ որ, Պերպերյան, առանց թերեւ քու բարձունքիդ նասնելու, որ մը քեզի սես պիտի մեռնի՛ք մենք ալ...

Համբույրներով՝
Ռ. Զիլինկիրյան

ՏՈՒՐՔ ԱՍՊԵՏԱԲԱՐ ԵՎ ԲԱՆԱՍՏԵՂՄՈՐԵՆ

Արևմտահայ մյուս բանաստեղծների նետ նամեմատած՝ Ռուրեն Սեակի թարգմանական ժառանգությունը կարծես մեծ չէ: 1985թ., երբ տպագրում էինք նրա ծավալուն ժողովածուն, ընդամենը տասնվեց թարգմանություն կարողացանք հավաքել և առանձնապես մեծ հույսեր չունեինք, թե այս քանակը կարող է նետագայում ավելանալ: Այն տպագորությունն էր ստեղծվում, թե շնայած Ռ. Սեակը մոլի ընթերցասեր է եղել և, դատելով իր նամակներից, ուշադիր նետել է իր ժամանակի գրական նորություններին, այնուամենայնիվ, առանձնապես՝ սեր չի ունեցել թարգմանական աշխատանքի հանդեպ:

Սակայն, երբ 1990թ. մարտին ինձ նանձնվեց Ռ. Սեակի նորահայտ անտիպների մի մեծ տրցակ, ապա առաջին իսկ ծանրությունից նետո ես ստիպված էի փոխել կարծիք Ռուրեն Սեակ բանաստեղծ-թարգմանչի մասին. Ի թիվս մի շարք արձակ և շափածո անական ներքությունների, ես գտա քսան թարգմանություններ, որոնք անհայտ էին մեզ: Ավելին, տեքստարանական որոշ նախնական պրադրություններ առիթ էին տալիս ենթադրելու, որ շատ հավանական է ուրիշ անտիպ թարգմանությունների գոյությունը, որոնք վազ թե ուշ, այս անտիպների պիս, պիտի մեջտեղ գան: Ինչպես երեսում է, 1909թ. ապրիլ-նունիս ամիսներին Ռ. Սեակը լրջորեն զրադվել է թարգմանությամբ: Հիմնական պատճառը, կարծում ենք, նետելալն է, 1909-ի ապրիլը, այսինքն՝ կիլիկան ջարդերը վնասկություն ունեցան բանաստեղծի համար: «Իրա վկայությունն է, թերեւս, «մ'կ իմ հայրենիքս...» բանաստեղծությունը: Ռ. Սեակի ստեղծագործական կյանքում կատարվում էր ծանր և

պարտադրված մի բեկում: ձիշտ է, բանաստեղծը այդ օրերին գրում էր ցավի և ցասումի տողեր, սակայն և ստիպված էր հրաժեշտ տալ լուրացված ու մշակված ստեղծագործական մի ամրող շրջանի: Խորուկ անցումի մեջ ծնվող բանաստեղծական որոշ պարապը նավանարար լցվել է թարգմանություններով: Սա էսթետիկական սկզբունքների լուրատեսակ ինքնաստուգում էր նաև: Թերեւս այս է պատճառը, որ Ռ. Անակի թարգմանական երկացանկը սահմանափակված է ռումանական բանաստեղծների շրջանակով՝ Լամարտին, Մենտ-Բյուվ, Հյունե, որոնց, սակայն, ավելանում են Վեռլենը և Ալբեր Սամենը: Վերջինս, թերեւս, ամենարածված պմտմբ էր դարասկզբի ֆրանսիացի բանաստեղծներից: Ռ. Անակի ժողովածոյի մեջ արդեն երեք թարգմանություն կար Ա. Սամենից, որտեղ ավելանում են չորսը:

Կարծում ենք, որ թարգմանական մի փոքրիկ հայտնություն է Լամարտինի «Լինը»: Այս գլուխզործոցն իսկապես մեծ նշանակություն է ունեցել նաև քերթության արևմտահայ հատվածի համար, և եղած մի շարք թարգմանություններին հավելվում է նորը: Թերեւս արժե ենիշել, որ Լամարտինի նշանավոր բանաստեղծության թարգմանիչներից մեկն էր Ռ. Անակի սիրելի ուսուցիչը՝ Ռեբեսոս Պերպերյանը:

Նորահայտ անտիպեները գալիս են վերջնականապես հաստատելու, որ Ռ. Անակի ամենասիրած բանաստեղծը եղել է Հայնեն: Հարցը միայն քանակը չէ: Դեռևս 1985թ., բանաստեղծի ժողովածուն կազմելիս, մեզ նետաքրքրութ էր կարենը մի հարց. ո՞ր լեզվից է նա թարգմանել Հայնենի մագրի՞ց, թե՞ Երկրորդ լեզվից: Ռ. Անակի գերմաներենի հմացության մակարդակը մեզ հայտնի չէ, չասած այն մասին, որ այդ լեզուն մեծ տարածում չուներ արևմտահայ մտավորականության մեջ, ի տարբերություն ֆրանսերենի, որը զբերե բոլոր արևմտահայ գրողներն ու արվեստագետները մայրենի լեզվին հակասար տիրապետում էին: Մրանից զատ, գերմաներենի նանդեպ եղած զուսպ վերաբերմունքը, զուցե արևմտահայ մտավորականության անխուսափելի անդրադարձն էր Թուրքիա և Գերմանիա գորացող դաշինքի նանդեպ: ձիշտ է, մշակույթը և քաղաքականությունը տարրեր, նույնիսկ իրար հակառակ բաներ էին, անուհանդերձ... Արեւմն, ի՞նչ, Ռ. Անակի Հայնե թարգմանել է ֆրանսերենից:

Դատելով նորահայտ նյութերից, բանաստեղծն իսկապէս Հայնե բարգմանն է Ֆրանսերենից: Նման ենթադրության իրավունք է տալիս հետևյալ փաստը. Հայնեի բարգմանությունները պարունակող սեակյան ինքնազբերի վրա, բանաստեղծի ծեռքով, ֆրանսերեն գրված է «*Intermediaire lyrique*», այսինքն՝ «Քնարական միջնարար»: Սա Հայնեի նշանավոր շարքերից մեկի վերնագիրն է: Հետևողաբար պարզ է, եթե Անակը զերմաներենից բարգմանած լիներ, ապա, շարքի վերնագիրը նայերենով չգրելու դեպքում, ինչո՞ւ պիտի գրեր ֆրանսերեն:

Սակայն սրանով, կարծում եմ, նարգը պարզելու փոխարեն ավելի բարդացրինք. ինչո՞ւ Հայնե և ինչո՞ւ ֆրանսերենից: Ավելի նիշտ, եթե Հայնե, ապա ինչո՞ւ ֆրանսերենից:

Փաստն ինքնին չեր գրողի մեր հարցասիրությունը. Եթե չլիներ մի հանգամանք: Ի վերջո, արևմտահայ գրականության մեջ քիչ չեն դեպքերը, երբ բարգմանությունը կատարվել է: Երկրորդ լեզվից: Վերցնենք թեկուզ Միցկենիչի բանաստեղծությունները Դ. Վարուժանի բարգմանությամբ Փաստ է, որ Վարուժանը լենիրեն չգիտեր: Հայնեն ևս Միցկենիչի պես տասնիներորդ դարի ոռոմանտիկ բանաստեղծության գաղաքներից էր, և թվում է, թե բական ու օրինաչափ կոյսուիլին այս բարգմանությունները ևս Խոկաճ շմոռանանք, որ Ռ. Անակի նշանաձր զերմանուիհի Յաննի Ապելն էր, արվեստների ու գրականության սիրահար: Շատ հնարավոր է, որ բանաստեղծի սերը Հայնեի հանդեպ հենց այս զերմանուիհին է արքնացըրել: Հնարավոր է նաև, որ Հայնեի բարգմանությունները երախտիքի լուրատևակ տուրք էին հայ բանաստեղծի կողմից զերմանական մշակույթին, զերմանական ժողովրդին և, վերջապես, իր պաշտելի Էակին: Ուստի, հանուն այս ամենի, հայ բանաստեղծը զնացել է զիջողության, զերմանագիր բանաստեղծին բարգմանն է: Ֆրանսերենից: Բայոր դեպքերում, եթե մեր ենթադրությունները նիշտ են, ապա Ռ. Անակն իր տուրքը տալիս էր ասպետարար և բանաստեղծորեն:

Ա.Ե.ՔՍԱՆԴՐ ԹՈՓԶՅԱՆ

ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՍԵՆՏ-ԲՅՈՒ

ՀՆՉՅԱԿ

Ծաղկազարդ ծառ մ'էի ուր պարմանությունըս
կերգեր.

Պարմանություն՝ սե՞զ քոչուն որ փախալ այնքան
արագ,

Բայց փախչելեն ալ առաջ այնքան երգած եր
երգեր.

Տերեաթափ այդ ծառեն կզանգատեր շարունակ:

Ու իր գանգատը տիտուր այնքան քովիչ շեշտ
մ'ուներ.

Որ ունկնդիր ներկաներ....*

Արծագանգեն խռովված քուփին ինքնամփոփի
կունկնդրեր

Ու սիրտը ծեր կաղնիին լուռ կարտասվեր
տրտմունակ:

* Անընթեռնելի բառ:

Հիմա ոչ երգ ու ոչ կյանք, ծառն երգերեն որը մնաց.
Տրտում օդին մեջ նյուղերն իր կերկարե լռակյաց.
Երբեմն խուլ կլսվի չոր ճարճատյուն մը միայն:

Ու կհյուծի, կսպասե, կտառապի լռելյայն.
Մինչև այն ժամն ուր դժնե քաղդին՝ սգալոր հըլու
Գա վերջնագույն ծմեռի վերջին երգը երգելու:

1907, 18 նունիսի

ԱՄԱՐՏԻՆ

ԼԻՃԸ

Այսպես ափե ափ, վտարված տրտում,
Անայդ ցայգին մեջ տարված անդադրում
Չենք կրնար դար-դա՛ր ծովուն վրա խոր
Խարսխիլ մի օր:

Ո՞վ լին, տարին նոր բռնորվեր է դեռ.
Ու ես իր սիրած ալյաց առջնթեր,
Նստիլ, կուգամ այն քարին վրա բաց
Ուր ի՞նքն էր նստած:

Այսպե՞ս կոռնայիր խոր ժայռերուն տակ,
Կոռնայիր անոնց կուրծքին փլատակ,
Այսպե՞ս կնետե նովն ալիքներուն
Զուրդ՝ իր ոտքերուն:

Ցայգ մը, կնիշե՞ս, կնավարկեինք,
Հեռուն լուս էին ալյակ ու երկինք,
Թենակները լոկ մեղմ կրախղեին
Ալյաց դաշնային:

Հանկարծ, երկրեն դե՛ռ անձանոք, բրրուն
Երգ մ'արձագանգեց տխրա՛ծ ափերուն,
Ալյակը լոեց. և ինձ սիրական
Այս վայրերն եկան:

«Կացե՞ք, նեղզ ժամեր: Կա՞նգ առ, ժամանակ.
Չեր ծոցը օրբուն
Թռղեք վայելել նեշտանքներն արագ
Մեր քաղցր օրերուն:

Քանի՞ թշվառներ զքեզ կուլան նոս
Անցե՞ք, որպեսզի
Տանեք իրենց ժամն ու կյանքը վշտանոս...
Բայց մոռցեք մեզի...

Իզո՞ւր կիսնդրեմ դեռ մի քանի ժամ,
Ժամ արագախո՞ւյս...
«Դանդաղ լեր» կըսեմ ցայդին տարաժամ,
Անա՞ արշալույս...»

Ա՞յս, սիրենք, սիրենք, ժամեն նապշտապ
Օգտվիլ փութանք...
Մարդ նավահանգիստ չունի. ոչ ժամն՝ ափ.
Կսանինք, կերթանք...»:

Նախանձաբե՞կ ժամ. երանությունով
Հղի՝ սիրատարփ կնպինք գինով
Մի՞քե կսահին այնքան արագ քան
Ժամերը լալկան...

Այս, ի՞նչ, չենք կրնար թողուլ նետք մը ողջ,
Ի՞նչ, անցնի՞լ նավետ, կորսվիլ ամբո՞ղջ...
Ինչ որ ժամը մեզ տվավ, վերջն առավ,
Չի պիտի տա բնա՞վ...

Օ՛, անգո անցյալ, վիճեր անհատակ.
Ի՞նչ կընեք ժամերն որոնք կուլ կուտաք.
Ըսե՞ք, պիտի տա՞ք օրերն երջանիկ
Որ առիք, տարիք...

Ո՞վ լին, լուր ժայռեր, անծավք, մութ անտա՛ռ,
Դուք որ անվախնան կապրիք անդադար,
Շքե՛ղ բնություն, պահե այս ցայգին
Հուշքը բանկագին:

Պահե միշտ հանդարտ, քե նովով օրրուն:
Շքե՛ղ լին, պահե՛ ափիդ կողերուն.
Նոնիներջուդ մեջ, ժայռերուդ կուրծքին
Որ քեզ կհակին:

Թող գաղջ զեփյուռին ծոցը ըլլան.
Ու վանկերո՛ւդ մեջ որ ափե ափ կերթան,
Ու փողփող աստղին ծո՛ցը արծաթի
Որ վրա՛դ կծաթի:

Թող հովն նապանցիկ, եղեգն նեծեծուն,
Թող խնկոտ օդին նեղդ բույրը օծուն,
Թող ինչ որ կապրի, կերգե առանձին,
Ըսին «սիրեցին...»:

16 նունիս 1909

ՇԱՌԻ ԳԵՐԵՆ

Ո՞վ կուլա դրանքս՝ մայրամուտի՞ն.

Սերն է, դուռըդ բաց:

Ո՞վ այս տժգույն դեմքն՝ իմ լուսամուտին.

Փառքն է, դուռըդ բաց:

Կզարնեն, ա՞խ, ո՞վ կզարնե ուժգին.

Մահն է, դուռըդ բաց:

Ո՞վ կուզն սիրել այս սիրտը լալկան,

Այս սիրտը ուժեղ.

Գեղեցիկ աղջիկ, քեզի կուտամ զայն,

Համբույրի մը տեղ:

Զբոսնե անուշ, ինչու որ նիմա

Ուրիշ գործ չունիս

Պուպրիկներուդ պիս կարծես անըզգա

Եթե կնազնիս:

Ան ավելի կարն կտևե քան վարդ

Մը սիրե մեղու

Վերջն ուրիշներուն դուն կերպաս զվարք

Ու ես ալ լալու:

Ա. ՍԱՄԵՆ

ՏԱՂԵՐ. ԿԵՐԱԶԵՄ...

Տաղե՞ր կերազեմ, անո՞ւշ, դայլայլուն,
Որ փետուրներուն պես բուսին նոգվույն:

Խարտյաշ քերթվածներ ուր սիրութ քակվի
Կույսին նետքին պես՝ ջուրին տակ ծավի:

Անկապ, անկշիռ քերթվածներ տխուր
Ուր ծեռքը սահի թենակին պես լուռ:

Հին իրանի վրա զազիր, դողդոջ, վես,
Անշոշափելի՛ ծայի՛ն, ամպի՛ն պես:

Փոքրիկ վանկերով, նանգերով քնքույշ,
Տաղեր՝ կախարդող ցայզին պես անույշ:

Գինով իրիկվա՞ն պես՝ երգեր տըկար
Ուր նոգ՞ն նազի՞վ զգվանք մը զգար:

Եվ երկասո՞ւզ խո՞լ գիշերն ի վար
Հայրա՛տ դալուկով մեռներ անսպառ,
Ինչպես գաղջության մեջ լուծված մի բույր...

Հովի նեծեծներ, մրմո՞ւնջ, նև՛ք, նամրո՞ւյր...
Տաղեր որ մեռնին վարդին պես անթույր...

ԱՄՈՎԱՆ ԺԱՄԵՐ

Մանրաբարձ բույրեր: Պղնձի լուսնակ:
Կանքեղներու պես՝ ծեր գմբեթին տակ
Աստղերը կայրին: Խունկի ժամ անգին:
Կնճշե բավշին վրա ծաղկի նոգին:

Գույն-գույն պորփյուրե կաթող ջուրն հստակ
Ավազանի մեջ կուլա շարունակ:
Խուլ պարտեզներու նվազուն նոգին
Կծորե եղուկ բույր մը ախտագին:

Տերևի ստվե՛ր մ'անգամ չի շարժիր:
Միա՛ն շրբունքը կպոռթկա կարմի՛ր,
Բարձրադիր ջանի մը բոցերուն տակ:

Ու դուն գիշերին մեջը անհատակ՝
Կրվիս անեղ, դժնդակ ու վես
Շիրմի մը նավե՛տ փակ սափորին պես...

21 նոյեմբեր 1908

ԱՄՈՎԱՆ ԺԱՄԵՐ

Բյո՛ւր բյուրեղնե՛ր բեր ոսկի
Բեր բաժակներն անբչարեր
Ու բող մեր սե՛րը սողոսկի
Բույրերու մեջ աղետարեր:

Վարդե՛ր, վարդե՛ր, դարձյալ վարդեր:
Ես կալաշտեմ քեզ տիբունի
Չեր գինով գողը՝ մահաբեր
Գույներու մութ խռովքը ունի:

Ամառը նե՞ք կծործորա:
Կքալես: Հո՞ւզը դեզերուն
Կցայտն ձյո՞ւն լանջքիդ վըրա:

Պարտեզը մո՞ւթ է վիճի պես:
Ու իմ սրտիս մեջ խռովուն
Քաղցրության ախտ մը կա կարծես:

ԹՐԹՈՒԹԻՄՆ

Պարտեզին խորը քաղցրագին
Սրինգի մը կուլա նոգին:
Վճիտ է շուրբն ուր տրտմարար
Կնևա երգը անբարբառ:

Ցա՞յդ պատրանքի, ցա՞յդ մեղկության,
Որ շարժումով մը ծըփական
Երազ-նետքերու վրա կնակի
Գոհար լուսնակն արևելքի:

Շահսլրակնե՞ր, թերե՛, գինո՞վ,
Կապուտակ գո՞ւյն-գույն աչքերով
-Աստղը ակին մեջ կծաբի...-
Կածաններու մեջ արծաբի

Գացեք քաղել սիրո արտեն
Այն սրտերը - ո՞ւշ է արդեն -
Որ կմեռնին ձեր մազերուն
Մեջ մեռնելու իղծովն օրուն...

፲፻፲፻

ԱՇԽԱՆ ԵՐԳ

Աշնան օրըուն Զուբակներուն

Հեծքն անվերջ
Նվազորեն
Կուլա նորեն
Սրտիս մեջ:

Ու կերթամ լուռ
Ես անձնատուր
 հուշերուն,
Հո՞ս, հո՞ն, աշնան
Թերթին նման
 մոլորուն:

1909 17 նույնիս Լոզան

ԲԱՐԻ ԵՐԳԸ

Լուսինն պուրակի
Վրա կհակի.
Ամեն մեկ նյուղեն
Զայներ կողողեն
- Անտառ հստալի...

Ո՞վ իմ սիրելի:

Սևքող դառնահեղ
Սև անագին մեծ
Սովերը հստակ
Զրակայքին տակ
Երե՛ր կսուզի...

Ժամն է երազի:

Անպարփա՛կ, անտես,
Անուրջ մը կարծես
Կանձրես վերեն
Հուր նանանչներեն
Աստղ մը կփայլի...

Ժա՞մ փայփայելի:

Հ. ՀԱՅՆԵ

Երազի մը մեջ տեսա վաղանցիկ
Կրկին պաշտելի դեմքըդ գեղեցիկ,
Այնքան գեղեցիկ ու նրեշտակունակ.
Այլ այնքա՞ն տժգույն, այնքա՞ն վշտունակ:

Ու մինակ շուրթերըդ էին կարմիր
Բայց շուտով մահուն* համբույրը նանիր
Կփակե զանոնք ու շուտ կմարի
Աչքերուդ զբոտ այդ լույսը բարի:

Բարեկա՞մ, սե՞ր, քա՞ր փիլիսոփայի.
Կգովեն ամենքն քույրերն այս երեք.
Ատենոք ես ալ շատ կգովեի.
Բայց, ավա՞գ, զանոնք չի գտա երբե՞ք:

* Ինքնազրում «համուն» է, բայց նավանորեն
պետք է լինի «մահուն»:

Երկիրն այնքա՞ն է գեղեցիկ,
Երկինքն այնքա՞ն է կապուտակ,
Եվ սյուրն այնքա՞ն գաղջ, նպանցիկ
Մրգաստանին վըրա նամակ
Բյուր ծաղիկներ աստվածային
Կեանանչեն ցողին մեջեն:
Ո՞ւր որ աշքերըս կնային
Մարդեր կերգեն ու կկանչեն:
Եվ սակայն ես պառկած ըլլալ
Կցանկայի մեռելազին
Ու փոսին մեջ փաթտված լա՛լ
Սիրունիին մը դիակին:

10 մայիս 1909

Մանիշակներն իր աշքերուն կապուտակ,
Կարմիր վարդերն իր դեմքին.
Իր ձեռքերուն եղբւանի սպիտակ՝
Այդ բոլորն ալ կծաղկին.
Սի՞րտն էր միշտ, որ բոշնեցավ կուրծքին տակ:

Դուք գեղեցիկ, վնիտ աստղեր ուկեզես,
Բարի տարեք դուք աշխարհի սիրունույս,
Ըսեք իրեն, թե միշտ նիվանդ ես սրտես
Ու միշտ դժգույն, նավատարիմ ու աննույս:

Երկիրն այնքա՞ն է գեղեցիկ,
Երկինքն այնքա՞ն է կապուտակ,
Եվ սյուրբն այնքա՞ն գաղջ, նպանցիկ
Մրգաստանին վըրա նամակ
Բյուր ծաղիկներ աստվածային
Կնանանչեն ցողին մեջեն:
Ո՛ւր որ աշքերըս կնային
Մարդեր կերգեն ու կկանչեն:
Եվ սակայն ես պառկած ըլլալ
Կցանկայի մեռելազին
Ու փոսին մեջ փաթտված լա՛լ
Սիրունիին մը դիակին:

10 մայիս 1909

Մանիշակներն իր աշքերուն կապուտակ,
Կարմիր վարդերն իր դեմքին.
Իր ձեռքերուն եղրևանի սպիտակ՝
Այդ բոլորն ալ կծաղկին.
Սի՞րտն էր միշտ, որ բոշնեցավ կուրծքին տակ:

Դուք գեղեցիկ, վնիտ աստղեր ոսկեգես,
Բարե տարեք դուք աշխարհի սիրունույս,
Ըսեք իրեն, թե միշտ նիւվանդ ես սրտես
Ու միշտ դժգույն, նավատարիմ ու աննույս:

Հողն անջրդի էք, մայիսը խսկուց
Շենցուց զայն նորեն, ամեն բան նորեն
Կիրճվի հիմա ժպտով մ'անհնար,
Միայն ևս եմ որ ժպտիլ չեմ կրնար:

Կծաղկին բոլոր մարգերն սիրահալ
Բոժոժներ կերգեն ու բռչուններն ալ
Սոսափերուն մեջ կարծես կխոսին:
Անմիտ կգտնեմ այս բոլորն ու սին:

Կծանձրացնեն զիս մարդերը բոլոր.
Մտերիմներս խսկ: Անոր նամար որ
Տիկին կըսեն իմ սրտիս աղջիկան,
Այնքա՞ն պաշտելի ու քաղցր այնքան:

Փողերու պայծառ շնողին միջև
Սրինգի, տավդի երգեր կննչեն:
Անա կալարե սրտիս սիրունին՝
Իր նարսանիքի պա՞րն աստվածային:

Բայց քմբուկներու ու ...կներու*
Հնչյունին միջև՝ նեռվե նեռու,
Փոքրիկ ու բարի նրեշտակներ են
Որ կնեծկլտան, կողքան խուլորեն:

* Այս բառի առաջին երեք-չորս տառերն
անընթեռնելի են:

Ա.ՔՍՈՐԻ ԵՐԳ

Երբ գինով եմ սիրովդ անշեշ,
Ու երջանիկ քու գրկիդ մեշ,
Մի՛ խոսիր ինձ Գերմանիո վրա
Չեմ հանդուրժեր - պատճառը կա:

Ես մտածե՞լ ալ չեմ ուզեր.
Իմ նոգիիս մեշ մի նուզեր
Երկի՞ր, ծնո՞ղք, կյա՞նք նեռակա
Չեմ հանդուրժեր - պատճառը կա:

Հոն կաղնինե՞րը դալար են.
Կապույտ աշքով կիներն ամեն,
Հավատք, հույս, սերն են մշտակա.
Չեմ հանդուրժեր - պատճառը կա:

Ալիքները մոլեզնորեն
Դեպի ծովա՞փը կսուրան
Կփշրվին նորեն, նորեն
Ափին վըրան:

Կուգան անդո՞ւլ, հսկայական,
Ավազին վրա չեն թողուր նետք,
Ու վերջապիս կզայրանան.-
Մեր ինչո՞ւն պետք:

ԳԵՇ ԵՐԱԶ

Կերազեի զվարք տարիս մանկունակ.
Բլուրին վրա մեր գեղջուկ տունն էր մենակ.
Օրիլիին նետ ծեռք ծեռքի բլուրեն
Վար կիշնեինք վազքով՝ նորեն ու նորեն:

Սիրո՞ւն աղջիկ: Ծովի կանաչ, անո՞ւշ, նե՞զ,
Իր աշքերն են պարիկներու աշքին պիս.
Փոքր ոտքերուն վրա՝ մարմին սըլացիկ
Այնքան ուժեղ է ու այնքա՞ն գեղեցիկ:

Ու ձայնին մեջ այնքա՞ն գորով կա անշեշ
Որ կարծես մարդ նայեր անոր նոգվույն մեջ,
Ինչ որ կըսե խմաստալից է, զգոն,
Փոքրիկ թերանն է քարմ վարդի մը կոկոն:

Մանուկ նոգիս դեռ սխրացած չէ սիրով
Չեմ գինովնար ու կմնամ անխռով
Բայց էությո՞ւնըս կթմրի տարորեն
Ու ծեռքե՞րը կհամրուրեմ դողալեն:

Կարծեմ վերջեն շուշան մընալ* քաղեցի,
Իրեն տալով, քարձր ձայնով գոչեցի,
«Ամուսնացի՞ր, ինձ կին եղիք, Օրիլի՝,
Որ երջանիկ ըլլամ քեզ պիս, պաշտելի...»:

* «Մըն էր», «մըն ալ» բառակապակցությունները
Ռ. Սեակը շատ հաճախ գրում է միասին:

Իր պատասխանը չի գիտցա ևս երբեք,
Որովհետև ջուտ արթնցա վշտարեկ.
Ու զիս գըտա սենյակիս մեջ սգավանդ
Տարիներե ի վեր վառված, խեղճ նիվանդ..

ՄԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈԽԱՐԵՆ

1990թ. մարտին, ժննում, Ռուբեն Սևակի եղբորոք-դին՝ Հովհաննես Զիլինկիրյանը, մեզ հաճանեց երկու տետրերի քսերոպատճենները: Այս տետրակները, որ պարունակում էին Ռ. Սևակի անտիպանները, դեպքերի բարերաստիկ բերումով, հասնել էին Կանադա և գտնվում էին Տեր և Տիկին Զորյանների մոտ, որոնք, իրենց հերքին, անխարար պահպանելով բանաստեղծի ձեռագրերը, հաճանել էին մեր բարեկամ Հովին. Զիլինկիրյանին:

Անտիպանների առաջին տետրակը, որտեղ ամփոփված էին աշակերտական շրջանի ստեղծագործությունները, շարունակարար և ամրողչական, լույս տեսավ «Կանչ» թերթի էջերում (Ռուլիս-հոկտեմբեր, 1992թ.), ինչպես առանձին գրքույկով (Ռուբեն Սևակ. Անտիպ էջեր. «Կանչ» Երևան, 1992թ.): Երկրորդ տետրակը, որտեղ ամփոփված էին գերազանցապես հասուն շրջանի ստեղծագործությունները և բարգմանությունները, դարձյալ շարունակարար, լույս տեսավ «Անդրադարձ» (24-30 հոկտեմբերի, N21, 1992թ.) և «Ուրբար» (N44 և N45, 1992թ.) շարաբարերերի էջերում:

Կարծում ենք, որ հատուկ ուշադրության է արժանի երկրորդ տետրակը: Այստեղ, ֆորզացի առաջին էջում, մանրգրերեւ անընթեռնելի ձեռագրով զետեղված է մի բանաստեղծության սևագիրը և առանձին տողեր: Բանաստեղծության վերնագիրը և երկու-երեք բառեր պարզապես անընթեռնելի են: Ուշագրավ պատկեր է ներկայացնում նաև տետրակի վերջին երկու էջը: Այստեղ առանձին վերնագրերի տակ ներկայացված են բանաստեղծական շաբաթեր, լուրաքանչյուրը՝ լոքական վերնագիր: Այսպիսով, տասնվեց լոքնյակ կա, և, ինչպես

Երեսում է, բանաստեղծը դեռ շարունակել է յոթնյակների կազմելին ու ընտրելը, որոշ վերնագրեր յոթնյակից յոթնյակ են անցնում, ասես դժվարացել է որոշել, թե որ թեմային ավելի կհամապատասխանի: Սա, նավանարար, «Կարմիր գիրքը» ժողովածուին հաջորդողը պիտի լիներ: Ժամանակին (Ռուբեն Սևակ, Երևան, 1985թ., էջ 19-24) մենք խոսել ենք, թե ինչպիսի կարեռություն է տալիս բանաստեղծը ժողովածուի ներքին կառուցիկությանը: Բանաստեղծությունները հավաքված են ոչ միայն որոշակի թեմաների շուրջ, այլև որոշակի քանակներով՝ յոթական:

Ստույգ վկայություններ կան, որ Ռ. Սևակը նրապարկման եր պատրաստում մի քանի ժողովածուներ՝ «Սիրո գիրքը», «Քառս», «Վերջին հայերը»: Պատելով ստորև ներկայացվող ցուցակներից, մեր առջև «Քառս» ժողովածուի նախնական ցանկն է՝ առանձին շարքերի բաժանված: Նկատելի է նաև, որ սահմանափակ բվով ներկայացված են թե՝ ազգային-հայրենասիրական և թե՝ սիրային թեմաներով գրված բանաստեղծությունները: Անա այդ ցուցակները և վերնագրերը.

...*: ձԱՄԲԱ - 1. Արամպուլ (Վերջալույս), 2. Շամբերի (Նամակ), 3. Ճենովական ...* (Արշալույս), 4. Նիցցա, 5. Վենետիկան գիշեր, 6. Վայմար (Կեորե ու Շիլլեր), 7. Մշուշին մեջ (Լին):

Այնուհետև մի ցուցակի մեջ երկու շարքեր, իրար մերձ թեմաներով, ասես խառնվել են: Միաժամանակ նկատվում է, որ այդ տասնմեկից բանաստեղծը զատել է վերջին յօթը: Բացի այդ, տարօրինակ է վերնագրերի համարակալումը: Մի դեպքում նամարը զրված է վերնագրից նետո, մեկ այլ դեպքում՝ վերնագրից առաջ. 1.քիած /6, Վերջին արքային/1, Խմը /2, Զդշիկը/3, 1/Կարինը/4, 2/Արգասավորում/5, 3/Մտինքը, 4/Պոռնիկը, 5/Տեր Մեդա, 6/Ռուն, 7/Զդշում:

* Անընթեռնելի բառեր:

Հաջորդ տասնչորս շարքերը վերնազրված են. ՍԵՎ ՄԱՂԻԿՆԵՐ. 1/Կարինը, 2/Արգասավորում, 3/Մտինքը, 4/Պոռնիկը, 5/Տեր Մեղա, 6/Բուն, 7/Զդշում: ՄՈՒԹԻՆ ԽՈՍՔԸ. 1/Պիտի սպասեմ, 2/Նամակը, 3/Անմիտ այգերգ, 4/Երեկ զիշեր, 5/Պատասխանը, 6/Տրտում ոգի, 7/Գլխու պտույտ: ՀՈԳԻՆ. 1/Ափին վրա, 2/Չի հասկցված, 3/Հոգիս, 4/Հետին կայծերը, 5/Արցունքին աղոթքը, 6/Այս զիշեր, 7/Մահազգացում: ԳԻՇԵՐԻՆ ՏԱՃԱՐԻՑՅ. 1/Լեման, 2/Վերջալույս, 3/Կարապները, 4/Վերհիշում, 5/Մեղքը, 6/Ցայգածաղիկը, 7/Քնացող աղջիկը: ՏԺԳՈՒՅՆ ԵՐԳԵՐ. Հեծեծ/4-4-4/, Ժպիտ/4-4-4/, Էտըլվեյս/4-4-4/, Կարյունի/4-4-4/, Ո՞վ կա...Անբերեննելի վերնազիր և՝ Քու նոզին էր: Խնչպես տեսնում ենք, այս շարքի առաջին չորս բանաստեղծությունները առանձնացված են բանաստեղծական ոտքերի կանոնավոր չափերով: ՄՈՒԹԻՆ ՏԱՃԱՐԻՑՅ. Լեման, Վերջալույս, Կարապները, Պիտի սպասեմ, Նամակը, Անմիտ այգերգ: ՕԿԱՆՆԱ. Օվսաննա, Երգ Երգոց, Մատյաներ/~/, Գինով սեր, Աղոթք, Ալելույա, Թաղում: ԿԱՐՄԻՐ ԱՐՑՈՒՆՔ. Ազատության համար, Ցավոք, Կարմիր կարոտ, Փոքրիկ ներսոց, Ենովան, անբներենելի վերնազիր, Երգիչ: ՄԵՂՔԸ. Խորան, Գլխու պտույտ, Պոռնիկը, Զդշում, Տեր Մեղա, Քնացող աղջիկը: Թվարկված է վեց բանաստեղծություն, հավանաբար առաջին վերնազիրը նաև շարքի ընդհանուր վերնազիրն է: Այնուհետև գալիս է մի շարք, որտեղ բազմաթիվ ուղղումները հնարավորություն չտվեցին նինդ վերնազրից ավելին կարդալ. Բասել, Աղրիուր, Սև սիրերգ, Երազ, Կուզեր մեռնիլ: ՍԵՎ ՄԱՂԻԿՆԵՐԸ. Կարինք, Արգասավորում, Մտինքը, անընթեռնելի վերնազիր. Սև ծաղիկները, Բուն: ԳԻՇԵՐԱՅԻՆ. Երեկ զիշեր, Մեղքը, անընթեռնելի վերնազիր, Վերհիշում, Պատասխանը, Տրտում ոգին: ՄԱՐԴԿԱՅԻՆ. Դրամին աղոթքը, Թրուպատութերը, Մարդը, Սաքիա, Երեկ չո՛ր, Համրութը, Ժամերու...*: :

* Անընթեռնելի բառ:

Ցուցակների մեջ հանդիպում են մի քանի անձանոթ վերնագրեր, սակայն եթե հաշվի առնենք, որ Ռ. Սեակը սովորություն ուներ միենույն բանաստեղծությունը տարբեր վերնագրերի տակ տպագրել, ապա նոր վերնագիրը դեռ անձանոթ բանաստեղծություն չէ: Օրինակ՝ «Նիցցա» վերնագիրը: Սա, ամենայն հավանականությամբ «Կարապի երգ» (տես՝ Ռուբեն Սեակ. Երկեր. 1985թ. էջ 145) բանաստեղծությունն է, որը հայտնի է նաև «Կարապը» և «Վերնիշում» վերնագրերով: Միաժամանակ պետք է հաստատապես երթադրել, որ «Վենետիկյան գիշեր», «ձենովական...», «Վայնար» կամ «Բուն» բանաստեղծությունները վկայում են անտիպ՝ և անհայտ բանաստեղծությունների գոյությունը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Էրոսի և Թանատոսի միջև Ալ. Թոփչյան	5
ԲԱՆԱՍՏԵՂՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ	
ՄԵՆԵՐԳ	9
Ղովտի կին	10
Ա՛յ աշքեր	11
Ստիճառը	13
Քնացիր	14
Սև սիրերգ	15
Քունի ժամ	16
Թաղումը	17
Անմիտ այգերգ	18
Ո՛վ դուն, որ կանցնիս	19
Տե՛ր, մեղա	20
Հին հարսներգ	21
Սկիզբը դեպի անհայտ Ալ. Թոփչյան	22
ԱՐՉԱԿ	
Ճամբորդություն	25
Վերջալույս	33
Սուզ	35
Տուրք ասպետարար և բանաստեղծորեն Ալ. Թոփչյան	38
ԹԱՐԳ-ՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ	
ՄԵՆՏ-ԲՅՈՒ	41
Հեշյակ	41
ԼԱՄԱՐՏԻՆ	43
Լիճը	43
ՇԱՌԻ, ԳԵՐԵՆ	46
«Ո՞վ կուլա դրանքս՝ մայրամուտի՛ն...»	46
«Ո՞վ կուզե սիրել այս սիրտը լալկան...»	46
Ա. ՍԱԼՄԵՆ	47
Տաղե՛ր կերազեմ...	47
Ամովան ժամեր- «Մանրարարձ բույրեր: Պղնձի լուսնակ...»	48

Ամովան ժամեր- «Բլուր բյուրեղներ թեր ոսկի...»	48
Թրթոռումն	49
Վ.ԵՌԻ.ԵՆ	.
Աշնան երգ	50
Բարի երգը	51
Հ. ՀԱՅՆԵ	.
«Երազի մը մեջ տեսա վաղանցիկ...»	52
«Բարեկա՞մ, սե՞ր, քա՞ր փիլիսոփայի...»	52
«Երկիրն այնքա՞ն է գեղեցիկ...»	53
«Մանիշակներն իր աչքերուն կապուտակ...»	53
«Դուք գեղեցիկ, վճիռ աստղեր ոսկեցես...»	53
«Հողն անջրդի էր, մայիսը իսկույն...»	54
«Փողերու պայծառ շնորհն միջն...»	54
Աքսորի երգ	55
«Ալիքները մոլեգնորեն...»	55
Գեշ երազ	56
Մամոքազրությունների փոխարևն Ակ. Թողիշյան	58

Գրական-գեղարվեստական նրատարակություն
Ո-ՌԻԲԵՆ ՍԵՎԱԿ
Անտիպ Էջեր

Խմբագիր՝ Ռ. Կ. Ղարիբյան
Նկարիչ և գեղ. խմբագիր՝ Գ. Վ. Մարիկյան
Տեխ. խմբագիր՝ Վ. Գ. Ավազյան
Վերստուգող սրբագրիչ՝ Ն. Ա. Վարդանյան
Շարվածքը նամակարգչի վրա՝ Օ. Պ. Թերզյան
Ն. Ա. Վարդանյան

ИБ 7015

Հանձնված է շարվածքի՝ 24.08.1994թ.:
Ստորագրված է տպագրության՝ 24.09.1994թ.:
Ֆորմատ՝ 70x90 1/32; Թուղթ՝ տպագրական N1:
Տառատեսակ՝ «Արմթայմզ»: Տպագրություն՝ բարձր:
2,32 սարմ. տպ. մամ. 1,8 նրառ. մամ: Տպաքանակ՝ 1000:
Պատվեր՝ 19: Գինը՝ պայմանագրային:

«Նախի» նրատարակչություն, Երևան-9, Տերյան 91:

ՀՀ կառավարության առընթեր նրատարակչական
գործերի վարչության «Նախի» նրատարակչության
տպագրատուն, Երևան-9, Տերյան 89:

Utopia

stuff sent to him by his mother.
he says it's old, i say it's good,
he thinks poor: it's better than
some new copy books, ----- 2/- 2/-

He thinks the money was lost & forgotten
when he got his books: found one written:
Send me the rest, tell them you can
send with it when he returns (H.L.)
He thinks the books will be good for him
in school & probably be useful in writing
to his friends & so on. He wants to take me

to see his old teacher, Mr. Abbott, who taught
him French - used to be with Mr. Abbott,
but he has now left him.

All along